

Արձանագրություն N 4

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/12» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

13.04.2020թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Մանուչարյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մեհրաբյանը, Հ. Ռամազյանը, Ա. Խաչատրյանը, Ռ. Ռիմրոյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/12» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 10.04.2020 թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում տրամադրելու վերաբերյալ

(Ս. Մանուչարյան)

Պարզաբանման պահանջի տեքստ հ 1.

1. Եթե մասնակիցը հանդիսանում է ոչ ռեզիդենտ օտարերկրյա կազմակերպություն, ապա ապրանքի մատակարարման դեպքում որպես հարկային գործակալ արդյո՞ք կարող է հանդես գալ պատվիրատուն:
2. Եթե մասնակիցը հանդիսանում է ոչ ռեզիդենտ օտարերկրյա կազմակերպություն, ապա գնային առաջարկի ԱԱՀ դաշտը լրացվում է, թե՞ ոչ:
3. Եթե մասնակիցները հանդես է գալիս կոնսորցիումի պայմանագրով և պայմանագրի շրջանակներում առաջատար մասնակիցը ոչ ռեզիդենտ օտարերկրյա կազմակերպություն է ապա գնային առաջարկի ԱԱՀ դաշտը լրացվում է, թե՞ ոչ:
4. Եթե մասնակիցները հանդես է գալիս կոնսորցիումի պայմանագրով և պայմանագրի շրջանակներում առաջատար մասնակիցը ոչ ռեզիդենտ օտարերկրյա կազմակերպություն է ապա գնային առաջարկի կարող է արդյո՞ք ներկայացվել արտարժույթով:
5. Եթե մասնակիցները հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում), և մասնակիցներից մեկը հանդիսանում է ոչ ռեզիդենտ օտարերկրյա կազմակերպություն, ապա միևնույն մրցույթի շրջանակներում բանկային երաշխիքը արդյո՞ք կարող են ներկայացնել տարբեր բանկերի կողմից տրամադրված երաշխիքով: Այսինքն՝ միևնույն երաշխիքի մի մասը ներկայացվի ոչ ռեզիդենտ բանկի կողմից, իսկ մյուս մասը՝ ՀՀ ռեզիդենտ բանկի կողմից:
6. Եթե մասնակիցը հանդիսանում է ոչ ռեզիդենտ օտարերկրյա կազմակերպություն, ապա ապրանքի մատակարարումը արդյո՞ք կարող է կատարվել մինչև ՀՀ մաքսային սահման:

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

1. Եթե մասնակիցը հանդիսանում է ոչ ռեզիդենտ օտարերկրյա կազմակերպություն, ապա ապրանքի մատակարարման դեպքում որպես հարկային գործակալ արդյո՞ք կարող է հանդես գալ պատվիրատուն:
Պատասխան. Ոչ՝ Պարզվիրաբուն չի կարող հանդես գալ որպես հարկային գործակալ:
2. Եթե մասնակիցը հանդիսանում է ոչ ռեզիդենտ օտարերկրյա կազմակերպություն, ապա գնային առաջարկի ԱԱՀ դաշտը լրացվում է, թե՞ ոչ:

3. Եթե մասնակիցները հանդես է գալիս կոնսորցիումի պայմանագրով և պայմանագրի շրջանակներում առաջատար մասնակիցը ոչ ռեզիդենտ օտարերկրյա կազմակերպություն է՝ ապա գնային առաջարկի ԱԱՀ դաշտը լրացվում է, թե՛ ոչ:

Պատասխան 2-րդ և 3 -րդ հարցերին. Եթե մասնակիցը(<< ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ) հանդիսանում է ԱԱՀ վճարող, գնային առաջարկը ներկայացվում է ներառյալ ԱԱՀ և նախատեսված դաշտը լրացվում է:

4. Եթե մասնակիցները հանդես է գալիս կոնսորցիումի պայմանագրով և պայմանագրի շրջանակներում առաջատար մասնակիցը ոչ ռեզիդենտ օտարերկրյա կազմակերպություն է՝ ապա գնային առաջարկի կարող է արդյո՞ք ներկայացվել արտարժույթով:

Պատասխան. Մրցույթի հրավերի 8.5 կետը պարունակում է Ձեր հարցադրման պատասխանը:


5. Եթե մասնակիցները հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում), և մասնակիցներից մեկը հանդիսանում է ոչ ռեզիդենտ օտարերկրյա կազմակերպություն, ապա միևնույն մրցույթի շրջանակներում բանկային երաշխիքը արդյո՞ք կարող են ներկայացնել տարբեր բանկերի կողմից տրամադրված երաշխիքով: Այսինքն՝ միևնույն երաշխիքի մի մասը ներկայացվի ոչ ռեզիդենտ բանկի կողմից, իսկ մյուս մասը՝ << ռեզիդենտ բանկի կողմից:

Պատասխան. Այո՝ եթե նախատեսված է (կոնսորցիումի) համատեղ գործունեության պայմանագրով:

6. Եթե մասնակիցը հանդիսանում է ոչ ռեզիդենտ օտարերկրյա կազմակերպություն, ապա ապրանքի մատակարարումը արդյո՞ք կարող է կատարվել մինչև << մաքսային սահման:

Պատասխան. Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով հստակ նշված է մատակարարման հասցեն՝ ք.Երևան, Արգիշտի 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ս. Մանուչարյան
Անդամներ՝		Գ. Մեհրաբյան
		Հ. Ռամազյան
		Ա. Խաչատրյան
		Ռ. Ռիմրոյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան